„Правительст Вѣстникъ“-ում նոյեմբերի 30-ին տպուած էր հետեւեալը.

„Իրերի դրութիւնը Բալկանեան թերակղզու վրայ, Թրքական Արեւելքից հասնող տեղեկութիւններին նայած, անհնարին չէ դարձնում լուրջ բարդութիւններ ծագելուն։ Ժամանակին ձեռք առած միջոցների շնորհիւ և ձմեռային ցրջանի վրահասութեան պատճառով կարելի է յուսալ, որ Մակեդոնիայում ծագած շարժումը այժմ չի շարունակուի ընդարձակուել, սակայն շատ նշաններ ցոյց են տալիս Թիւրքիայի ուղղափառ աղգաբնակութեան մէջ աճող դժգոհութիւնը. այդ աղգաբնակութիւնը զանազան կոմիտէների աղդեցութեան տակ, ըստ երեւոյթին, պատրաստւում է այս գարնան ընդհանուր ապստամբութեան։ Այս յուզիչ երեւոյթները չեն կարող չը գրաւել ուշադրութիւնը Ռուսաստանի, որ ի սկզբանէ անտի և միշտ հոգացել է իրան ցեղակից աղգերի վիճակի մասին։ Որպէս զի սահման դնուի շարժման, որ կարող է իր յետեւից ամենալուրջ բարդութիւններ բերել ամբողջ Բալկանեան թերակղզու վրայ, Կայսերական կառավարութեան կողմից արուած էին Դրան համապատասխան առաջադրութիւններ, իսկ ռուսական դեսպանին Պոլսում յանձնուած է, տեղական պայմանները քննութեան առնելով, ներկայացնել խորհրդածութիւններ հնարաւոր և անյետաձգելի բարեփոխութիւնների մասին Մակեդոնիայի վարչական կազմի մէջ և հաստատամտութեամբ խորհուրդ տալ Թիւրքաց կառավարութեան՝ շուտափոյթ իրագործել այդպիսի բարեփոխութիւնները, որոնց նպատակն է բարւոքել ուղղափառ աղգաբնակութեան կացութիւնը։ Սակայն չը պէտք է ուշադրութիւնից բաց թողնել, որ, մինչեւ այդ երկրում գոյութիւն ունի ներկայ խռովութիւնը, որ Թիւրքաց կառավարութեան օրինական հիմք է տալիս՝ միջոցներ ձեռք առնելու ապստամբուած հպատակների դէմ, չափազանց դժուար է թէ գործնականապէս որ և է վարչական բարեկարգում մտցնել, և թէ աղգաբնակութիւնը լիակատար կերպով պաշտպանել տեղական իշխանութիւնների խիստ պատիժներից. ուստի առաջին և գլխաւոր պայմանը այդ ուղղութեամբ աջողութիւն գտնելու համար պէտք է լինի մակեդոնական կոմիտէտի կողմից դադարեցնել ագիտացիան. այդ կոմիտէները չը հասնելով իրանց դրած հայրենասիրական նպատակներին, լոկ միայն յետ են կանգնեցնում աղգաբնակութիւնը խաղաղ զբաղմունքներից և ենթարկում են նրան կորստաբեր յափշտակ-

ման բոլոր ծանր հետեւանքներին։ Կայսերական կառավարութիւնը յաճախ առիթ է ունեցել յայտնելու իր հայեացքը մակեդոնական հարցի մասին, պախարակելով սլաւոնական ազգերի ամեն մի փորձ՝ բռնութեամբ փոփոխելու Բալկանեան թերակղզու վրայ գոյութիւն ունեցող իրերի դրութիւնը, որ ապահոված է միջազգային դաշնագրերով։ Այդպիսի կարծիք չարունակում է պահպանել Կայսերական կառավարութիւնը և ներկայումս։ Այդ ի նկատի ունենալով նա նպատակայարմար համարեց նորից հաստատել թէ սերբական և թէ բուլղարական կառավարութիւններին իր բարեացակամ խորհուրդները, մասնաւորապէս անելով նրանց անհրաժեշտութիւնը հէնց սեփական շահերից դրդուած արգելք դնել վտանգաւոր ագիտացիային և ամեն կերպ նպաստել Բալկանեան թերակղզու վրայ խաղաղութիւնը պահպանելուն։ Կայսերական կառավարութիւնը իրաւունք ունի յուսալ, որ սլաւոնական տէրութիւնները, որ պարտական են իրանց աղատութեամբ և անկախութեամբ Ռուսաստանի անշահախնդիր զոհողութիւններին, կը հետեւեն իրանց տուած ցուցմունքներին, հաստատ հաւատով, որ Թագաւոր Կայսեր Բարձրագոյն կամքով արուած առաջադրութիւնները կը հանեն դրուած նպատակին։ Բալկանեան թերակղզու վրայ պատահելիք բարդութիւնների առաջն առնելու ռուսական անսասան վճիռը գտնում է միւս պետութիւնների կողմից լիակատար համակրանք։ Աւստրո-Ունգարական կառավարութիւնը չը յապաղեց յանձնել իր ներկայացուցչին Պօլսում, ռուսաց դեսպանի հետ հայեացքների փոխանակութիւնից յետոյ, միանալ այս վերջինի թախանձական առաջադրութիւններին Դրան՝ Մակեդոնիայում չուտափոյթ բարեփոխութիւններ մտցրնելու անհրաժեշտութեան մասին։ Թիւրքական Արեւելքում խաղաղութիւն պահպանելու մէջ ամենից շատ շահագրգռուած հարեւան կայսրութիւնների միահամուռ ջանքերը ուղղակի հետեւանք են 1897 թուականին դրանց մէջ կայացած համաձայնութեան, որի թէ բարերար ազդեցութիւնը և թէ գոյութիւնը հնարաւոր է միայն նրա հիմքում դրուած սկզբունքների անշեղ գործադրութեամբ. այսինքն, արգելումը՝ կամայական փոփոխութիւն առաջացնել դաշնագրերով սահմանուած կարգութեան մէջ Բալկանեան թերակղզու վրայ և խաղաղութեան պահպանումը, որ այնքան անհրաժեշտ է քրիստոնեայ ազգութիւնների բարօրութեան և ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու համար։ Ի վերջոյ կայսերական կառավարութիւնը, որ քիչ ապացոյցներ չէ տուել իր մշտական ցանկութեան պահպանել ամենալաւ

յարաբերութիւններ Թիւրքիայի հետ, չի կարող յոյս չը յայտնել, որ սուլթանի կառավարութիւնը, ձեռք առնելով ամեն տեսակ բռնութիւններ և խստասրտութիւններ դադարեցնելու անհրաժեշտ միջոցները, կը դնահատի յօգուտ Մակեդոնիայի քրիստոնեայ ազգաբնակութեան Ռուսաստանի բարեկամական առաջադրութիւնների նշանակութիւնը։ Մակեդոնիայի շուտափոյթ խաղաղացումը ամենալաւ միջոց է Օտտոմանեան կայսրութեան համար ամենալտանգաւոր բարդութիւնների առաջն առնելու»։